


ԱՂԲՅՈՒՐ

ՊԻՈՆԵՐ 2025.2

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

Հրատարակիչ՝
«ԱՂԲՅՈՒՐ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ» ՍՊԸ,
վկայական՝ 02Ա 050591
Լույս է տեսնում 1923 թվականից
Վկայական՝ 1174
Գրանցման համար՝ 286.110.04218
Հեռ. 091 59 38 13
Էլ. հասցե. aghbyur@yandex.ru
Կայք. www.aghbyur.com

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ. №2. 2025

ԳԵՎՈՐԳ ՆԵՐՍԵՍՅԱՆ. Երազում էր՝ խաղաղություն լիներ..... 2
ԿՈՐՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Տրակտորն ու Մաշոն 4
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ 8, 16, 26
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՑ 12
Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ. Հավերժական զրուցակիցներ. ՍԵԼԻՆՋԵՐ 13
Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ. «Ռոտոնդա» .. 20
Ա. ԵՂԻԱՅԱՆ. Հայերենի դասեր 27
Ս. ՂԱԶԱՐՅԱՆ-ԱՂԱՍԱՐՅԱՆ. ԹՈՒՂԹ ԵՎ ԳՐԻՉ 29
Հետաքրքրասերի էջ 30
Խաչբառ 31

Համարում տողադարձերը կատարվում են համակարգչային ծրագրի օգնությամբ, և հնարավոր են սխալներ։

Գլխավոր խմբագիր՝
ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

Շապիկին՝
Դիմերեսին՝ **ԱԼԵՔՍ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
Իրինդ գյուղի նկարչական դպրոց
Դարձերեսին՝ **ԼԻԱՆՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**, ՆԱՄ

«ԵՐԱԶՈՒՄ ԷՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵՐ»

ԳԵՎՈՐԳ ՆԵՐՍԵՍՅԱՆ



ԳԵՎՈՐԳ ՆԵՐՍԵՍՅԱՆԸ ծնվել է 2002 թվականի նոյեմբերի 8-ին Երևանում: Բնակվում էր Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոցի թիվ 13 շենքում, որի բակում հիմա նրա աղբյուր-հուշաքարն է: Կրթությունը ստացել էր հ. 66 հիմնական դպրոցում, այնուհետև՝ հ. 46 ավագ դպրոցում:

Գևորգը վաղ հասակից զբաղվել է ձյուդոյով, ունեցել մեծ հաջողություններ: Կյանքով լի, ընկերասեր ու նպատակասլաց «**ՈՒԺԵՂ ԳԵՎԸ**»-ը միշտ ամեն տեղ առաջինն էր, ինչպես կռվի դաշտում՝ բոլորին փրկելու առաջին քայլ ձեռնարկողը:

2021 թվականին ընդունվել է Եվրոպական համալսարանի կառավարում ֆակուլտետ և նույն թվականին զորակոչվել է բանակ: Ծառայել է Սիսիանում, հետո ծառայությունը շարունակել է Կապանում, այնուհետև Ջերմուկում: Երազում էր՝ խաղաղություն լիներ, որ ծառայությունից շուտ վերադառնար տուն, լիներ փոքրիկ եղբոր՝ Նարեկի կողքին, տեսներ մոր՝ ճանապարհին անդադար նայող աչքերն ու հոր հպարտ հայացքը. չէ՞ որ նա հայոց բանակում ուներ ոչ թե մեկ, այլ երկու զինվոր:

20-ամյակը դեռ չբոլորած՝ Գևը սեպտեմբերի 13-ին ադրբեջանական ագրեսիայի ժամանակ անմահացավ՝ կրակն իր վրա վերցնելով ու այդ կերպ փրկելով հարազատ եղբոր՝ Տիգրանի և ծառակից ընկերների կյանքը: Գերադասեց հարազատ եղբոր ու ընկերների կյանքը՝ սեփական կյանքն ու երազանքները դնելով հայրենիքի զոհասեղանին:

Հիմա Եռաբլուրում է: Պարգևատրվել է *«Զորավար Անդրանիկ»*, *«Մարտական ծառայություն»*, *«Գարեգին Նժդեհ»*, *«Մարտական խաչ»* առաջին գունդ մեդալներով:

Հիմա արդեն հերոսի տան մի անկյունը վերածվել է թանգարանի: Գրեթե ամեն օր հերոսի տուն են այցելում ընկերները, ինչպես նաև զինվորականներ, հերոսածին մայրեր, լեգենդ դարձած հերոսների հայրեր, եղբայրներ, քույրեր, անգամ անծանոթներ, ովքեր ծաղիկներ են դնում հերոսին նվիրված անկյունում:



ԿՈՐՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏՐԱԿՏՈՐՆ ՈՒ ՄԱԾՈՆ

Սև ծխի քուլաներ արձակելով՝ գյուղի առաջին տրակտորը հռնդյունով բարձրանում էր ոլոր-մոլոր ճանապարհներով: Ետևից, որոշակի հեռավորություն պահելով, գնում էր երեխաների խումբը: Մարդիկ դուրս էին թափվել բակերը, բարձրացել տների հողածածկ կտուրներին, հանկարծակի հրաշքի հանդիպած հայացքներով հետևում էին մեքենայի աղմկոտ ընթացքին:

Տրակտորը հասավ գրասենյակի դիմացի հրապարակ, աղմուկով մի կլոր պտույտ արեց՝ գետինը քերելով ու կանգնեց:

Նախագահը ձեռքով Սերգեյին շարժիչն անջատելու նշան տվեց: Սերգեյը նորից ճարպկորեն թռավ թրթուրին, մտավ խուցը, մի քանի բռնակներ վեր ու վար քաշեց ու անջատեց շարժիչը: Նա ասես իր պատառոտած զինվորական շապիկն ու մրոտած թևերը ցուցադրելու համար նորից կանգնեց թրթուրին ու ժայռի ծերպին կանգնած արծվի հայացքով նայում էր հավաքված գյուղացիներին: Հետո ցած թռավ, «փըխկ» արեց երեխաներին ու միացավ նախագահի շուրջ խըմբված մարդկանց:

- Հը, ինչի՞ եք հավաքվել, այ ժողովուրդ,- սկսեց նախագահը,- տրակտոր է, էլի, չե՞ք տեսել, դուք էլ ասում էիք՝ կոմունի՛զմ, կոմունի՛զմ, էդ ի՞նչ բան ա, էս ա կոմունիզմը իրա ոտով եկել ա ձեր դուռը:

- Խի սա հաց ու ջու՞ր ա տալու մեզ,- համարձակ վրա տվեց դարբին Եղիշը:

Խումբը նորից քրքջաց:

- Հաց ու ջուրը չգիտեմ, բայց գութանով վար անելն արդեն մոռացեք,- բացատրեց գլխավոր գյուղատնտես Ռազմիկը:

- Մենք քանի՞ գութան ունենք, Սեթո,- դարձավ նախագահը բրիգադիրին:

- Տասնչորսն ա:

- Ըհը, էս մեքենան էդ տասնչորս գութանի մի ամսվա վարը երեք օրում կանի կգցի մի կողմ, հասկացա՞ք այ ժողովուրդ:

- Պա, պա, պա,- զարմացական արձագանքեց խումբը:

- Մարտուն,- դիմեց նախագահը կոլխոզի հյուսնին,- դու էլ ոչ գութան ես սարքելու, ոչ էլ գութանով վար ես անելու:

Փայտագործ Մարտունը, որ ամեն ինչ արդեն հասկացել էր, մի քիչ առաջ եկավ.

- Բա մեր եզներն ի՞նչ պիտի անեն, նախագահ ջան: Կոլխոզում տասնութ եզ ունենք, է:

- Ա, էս մարդու դարդ ու ցավն էլ եզներն են, է,- ասաց նախագահն ու քրքջաց,- չորս եզ կպահենք մենակ կալսելու համար, մեզ հերիք է:

- Բա մնացա՞ծը...

- Էդ էլ ա՛ քու դարդը,- օգնության եկավ ֆերմայի վարիչը,- էն մնացածը կտանք պետությանը:

Կմթերենք: Մսի պլանն էլ դրանով կգերակատարենք հո:

- Գառնիկ,- դիմեց նախագահը ֆերմայի վարիչին,- չորս ուժեղ եզ ջոկի մի կողմ, էն մնացածը մյուս ամիս կուղարկենք մթերման: Բա, ժողովուրդ ջան: Դե, գնացեք ձեր տները, գնացեք: Արդեն լավ մթնել էր, երբ կոլխոզի փայտագործ Մարտունը անաղմուկ բացեց տան բակի փայտե դռնակը: Շունը միանգամից փաթաթվեց ոտքերին. ճանաչել էր: Կինը՝ Սաթոն, հաց, պանիր ու խաշած բանջար էր դրել սեղանին: Լուռ նստեցին իր սարքած փայտե աթոռներին, մի քանի րոպեից լամպի լույսի տակ արագ-արագ գիրք ու տետրերը հավաքելուց հետո սեղանի մոտ նստեց նաև տասնամյա աղջիկը՝ Սոնան:

- Բա, հիմա ի՞նչ, հայրիկ, մեր Մաշոյին էլ են տանելու՞,- հարցը հորն ուղղեց նա:

Մաշոն կոլխոզի կարմիր եզն էր՝ ճակատին սպիտակ աստղ: Մարտունի մոր վկայությամբ՝ նա սերվել էր երեսունվեցին կոլխոզի համար բռնագրաված իրենց կարմիր հորթից: Ամեն տարի ձորաբերանի իրենց գարու արտը վարելիս Մարտունը կոլխոզից խնդրում էր մի զույգ եզ, որոնցից մեկն անպայման Մաշոն էր լինում: Սոնան էլ վարի ժամանակ հոր հետ արտում էր լինում և անընդհատ փոքրիկ դույլով ձորից ջուր էր բերում, տալիս հորը: Մարտունը ջուրը շփում էր Մաշոյի մեջքին, իսկ նա նայում էր, թե ինչպես են թրթռում-խաղում Մաշոյի մեջքի մկանները: Վարի ավարտին Սոնան երկու դույլ ջուր էր դնում եզների առաջ: Հետո նա խոտի փնջով քշում էր ճանճերին ու թաց շորով սրբում էր Մաշոյի աչքերի խոնավ անկյունները:

Մարտունը լուռ ծամում էր իր ընթրիքը, նայում աղջկան ու ժպտում:

- Հայրի՛կ... բա մեր Մաշոն,- նորից թնկթնկաց Սոնան հացի սեղանի մոտ: Իսկ Մարտունն արդեն իր գլխում կայացրել էր որոշումը, առանձին քննարկել էր Սոնայի հետ, մնում էր համոզել Սաթոյին:

- Ի՞նչ,- զարմացած ճչաց կինը,- էդ երկու փութ գարին մեր սերմացուն է, գարունը ի՞նչ ես արտդ ցանելու:

- Ես դիմում կգրեմ, կոլխոզից երկու փութ սերմացու կխնդրեմ: Կօգնեն, ես գիտեմ: Հասկանու՞մ ես՝ չորս ուժեղ եզ են թողնելու: Մաշոն ջահել եզ է, բայց մի քիչ նիհար է: Մի ամիս որ խաշած գարի լցնենք դեմը, վրա կգա, միս կհավաքի, կուժեղանա:

- Մաշոյին կպահեն, թե չեն պահի, ախր...

- Ո՞նց՝ ախր: Բա էրեխուն ի՞նչ ասենք:

Մարտունն ամեն օր մութ-լուսին մտնում էր կոլխոզի եզների գոմը ու խաշած գարին շուռ տալիս Մաշոյի առաջ: Հետո հաց ու պանրի մի բրդուճ էլ խոթում



էր գոմատեղի պահակ Միսակ բիձու ձեռքերի մեջ ու գնում իր արհեստանոցը՝ փոցխի ատամներ ու եղանի պոչեր սարքելու:

Տրակտորն իր գործը անում էր իսկ տասնութ եզներն էլ պարապ էին: Նրանց ամեն օր դուրս էին բերում գոմի առջևի կալսի հրապարակ և անցած տարվանից մնացած դարմանը լցնում դեմները: Նրանք, ծանր գլուխները օրորելով, ծամում էին հին դարմանը՝ անտեղյակ սպասվելիք գյուղի իշխանության որոշումներին:

- Մաշոն լավ լցվել է, վրա է եկել,- մի երեկո հացի սեղանի մոտ անկյունում դաս անող Սոնային լսելի ձայնով ասաց Մարտունը:

Սոնան թռավ տեղից, մոտեցավ հորն ու, առանց բառեր ասելու, գրկեց պարանոցը:

Երկու փութ գարին վերջացել էր: Մարտունը երբեմն էլ ճմուտից մանգաղով փափուկ խոտ էր քաղում, լցնում Մաշոյի մսուրքը:

Աշնան սկիզբն էր արդեն, երբ մի երեկո շրջկենտրոնից եկած երեք բեռնատարները մտան գյուղ: Ամբողջ գիշեր գոմատեղում կատարվող իրադարձությունների աղմուկ-աղաղակը հասնում էր նաև բակում կանգնած Մարտունին:

Առավոտը վաղ, դեռ մութը գետինը, շնչակտուր հասավ գոմեր: Եզների գոմի դուռը կիսաբաց էր: Ներսում այնքան մութ էր, որ գերաններից բռնվելով էր առաջ գնում:

Գոմի խորքում անասունի փըռընչոց լսեց, գնաց առաջ: Չորս եզներ նստած էին մսուրքի դիմաց՝ գետնին: Մարտունը մոտեցավ, հերթով շոշափեց նրանց պոզերը, աչքերը չռեց ճակատներին՝ սպիտակ աստղ նշմարելու սպասումով...

Երբ այլայլված դուրս եկավ գոմի դռնից, կիսամութի մեջ նշմարեց կողքին կանգնած Միսակ բիձու դեմքը:

- Տարան,-ասաց պահակը,- տեսար, չէ՞, ինչ արին...

- Բա, Մաշոն... ախր...

- Նախագի հրամանն էր, ասեց՝ էսօր մսի պլանն ավելի կարևոր է, խոշորներին բարձեք: Ասեց՝ Մաշոյի վրա լավ էլ միս կա... Ես ի՞նչ կարայի՝ անեմ...

Միսակն արդեն ոչինչ չէր լսում: Ձայնը հասնում էր ականջին, բայց ոչինչ չէր հասկանում:

Անձրևը լավ էլ ուժեղացել էր, երբ հանցավորի զգացումով արդեն կանգնել էր իրենց դարպասի մոտ: Մտածեց, որ Սոնան հիմա պայուսակն է հավաքում դպրոց գնալու համար: Մազերը թրջվել, կպել էին գլխին, բայց դեռ ձեռքը չէր տանում բռնակին՝ վախենալով կարծես շանթահարվելուց:

Դարպասի դռնակի ճռռոցը հասավ Սոնայի ականջին, իսկ ինքն այդ պահին մտածում էր, որ ինչ լավ է՝ անձրև է գալիս, ու տանը ոչ ոք թաց դեմքի վրա չի տեսնի աչքերի խոռոչներում հայտնված արցունքի կաթիլները:

ՍՏԵՂԾՎՈՐԾՈՒՄ ԵՆ

«Նարեկացի» արվեստի միության նկարչական խմբակի սաները

Ղեկավար՝ ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ



ԱԳԱՊԵ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
8 տ.



ԱԴԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
12 տ.



ԿԱՐԻՆԱ ՊԱՐՈՆՅԱՆ
11 տ.



ԿԱՐԻՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
6 տ.



ՆԱՐԵ ՍԱՐԳՍՅԱՆ
11 տ.



ՍԱՌԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
11 տ.



ԳԱԲՐԻԵԼ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
13 տ.




ԼԻԶԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
13 տ.




ԼԻԼՅԱ ԽԱՍԱԽԱՆՅԱՆ
13 տ.



ՀԱՅԿ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
9 տ.



ՄԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
11 տ.



ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
8 տ.



ՍՈՖԻ ՊԱՐՈՆՅԱՆ
12 տ.



ՄԱՐԻ ՂՈՒԼՅԱՆ
7 տ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿՈՐՈՒՍՏ

Հայրենիքի կորուստը մի ցավ է,
Որ երբեմն լռում է, բայց միշտ
ներսում՝ ալեկոծություն,
Ինչպես բահի տակ թաքցրած
հիշողություն,
Որ փոխում է օդը, տարածքը,
սրտի տառապանքը:

Այդ կորուստը ոչ միայն հող է,
Այլև մի բեկոր անցյալի, որը
երբեք չես կարող լրացնել,
Ինչպես տուն, որն արդեն չկա՝
պատերն անընդմեջ հնչող
անդորրով,
Եվ նույն մարդիկ, ովքեր կորց-
րին իրենց հողը՝ չկարողանալով
հավատալ, որ անհետացել է
ամեն ինչը:

Սակայն հայրենիքի կորուստը
միայն ֆիզիկական զրկանք չէ,
Դա նաև մի ցավ է, որ ներսումդ
աճում է անընդհատ,
Որ առանց երկրիդ չես կարող
լիարժեք շնչել,
Որ նրա արմատները քաշում
են քո հոգին ու հիշողությունը՝
երկընտրանքի մեջ թողնելով:

Հայրենիքի կորուստը մեզ
սովորեցնում է տառապանքից
հետո ապրելու նոր դրսևորում-
ներ ձեռք բերել,

Եվ երբեմն էլ այն վերածվում է
միայն խորհրդանիշի՝ կորսված
ու չգտնված,
Բայց այն դեռ ապրում
է մեր մեջ՝ հույզերով ու
հիշողություններով,
Որոնք միշտ կղեկավարվեն
դեպի տուն՝ նույնիսկ եթե
ճանապարհը մութ ու բարդ է:

Միշտ հիշելու ենք,
Որ հայրենիքը ոչ միայն մի
կտոր հող է,
Այն գոյություն ունի այնտեղ,
որտեղ միշտ արթուն է սիրտը,
Որ դարեր հետո էլ շարունակե-
լու է զրուցել մեր հիշողություն-
ների լեզվով:

***

Աշունը գալիս է, ծաղիկների
վերջին շնչով,
Եվ տերևները՝ ոսկեհամբույր,
դառնում են գետնին,
Ինչպես կյանքը, որ թափվում է
տարիների հետ անխուսափելի՝
Պատերազմից հետո
մնացորդների մեջ փնտրելով
խաղաղություն:

Աշունը իբրև հիշեցում է, թե ինչ
է տրված մեզ՝ կյանքը,
Տերևները, որոնց ճանապարհը
մի օր կկտրվի,

Նրանք թափվում են՝ ըստ մի եղանակի,
Ինչպես մեր կորած տղերքը,
որոնք թաղված են իրար մեջ՝
Որպես մի անցյալ, որի անունները չկան արդեն:

Պատերազմի հոտը դեռ թեթև հնչում է օդում
Այդ բազում չարացած ու գրված տառերով,
Որպես թե հողը չի լռել,
Պատերազմից հետո փշրված սրտերի մեջ է մնացել նրանց արձագանքը:

Բայց աշունը գալիս է, ինչպես սիրո և վշտի մի խառնուրդ,
Նա՝ անխուսափելի, բայց ի վերջո բուժող,
Երբ ծառերը կոտրվում են՝ դարձյալ ծաղկելու համար,
Պատերազմից հետո հոգիները ամրապնդվում են՝ սպասելով խաղաղության:
Աշունը չի մոռանում անցյալի ցավը,
Բայց նրա մեջ կա հույս՝ նոր սկզբի համար:

Ինչպես մեր մարդիկ, որոնք վերադառնում են հողը,
Բայց նրա մասին խոսելուց հետո սկսում են ապրել
Մի նոր, մաքուր ու խաղաղ աշխարհում:

ԵԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Լոռու մարզ, Կաթնաղբյուրի ավագ դպրոց, 10-րդ դաս.

ԳԵՏԻ ԱՓԻՆ

Գետի ափին նստել եմ ես,
Ջուրն է խոսում շշուկով մեղմ,
Կռունկներն են ամպերին մեջ,
Ջրին ուռին թեքվել է հեզ:
Կառուցում եմ փայտից նավակ,
Թողնում՝ լողա ջրերի հետ,
Իմ երազն էլ՝ որպես նավակ,
Թող որ հասնի անհաս ափեր:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՆՔ

Երկինքն անամպ է, կապույտ ու խաղաղ,
Փոքրիկ ամպերը նավակ են դառնում,
Խաղում է արևն իմ աչքերի հետ,
Եվ ծիծաղում եմ ես ուրախ իմ մեջ:
Եթե լինեմ ես մի թռչուն թեթև, Կթռչեմ վերև, կտեսնեմ աշխարհի,
Բայց հիմա տասը տարեկան եմ դեռ,
Եվ երկինքն է դեռ իմ մեծ հեքիաթը:

ԳԱՌՆԻԿ ՊԱՊՅԱՆ
Երևան, Նորիկ Խաչատրյանի անվան հ. 113 դպրոց, 5-րդ դաս.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՅ ՄԵԾԵՐԻՑ

ՎԱՀԱՆ ԹՈՒՄՈՎԵՆՑ

(1893-1938 թթ.)

… Հայ ժողովուրդը համաշխարհային վայրիվերումներու ընթացքին հայտնվեցավ իբրեւ մեկը այն ազգերեն, որոնք շատ փոքրիկ, բայց ընդունակ են դուրս բերել իր արյան անհիմանալի, թաքուն եւ անսպառ աղբյուրները: Դիմանալ արյան, թողուլ, որ բացվի բազկերակը եւ վազե արյունը դարերու ընթացքին եւ դիմանալ… Եթե չըլլար հայ ժողովրդի ստեղծագործ ոգին, այդ բազկերակը շուտ կը ցամաքեր եւ պատմություն կունենար իր մեջ միայն հիշատակ, այնպես, ինչպես անհաշիվ գետերը, որոնք անժամանակ թվական մը հորդած են, սրարշավ եւ խոխոջելով վազած են՝ երջանկորեն ապրեցնելով տեղեր իրենց երանավետ ափունքներու վրա: Հայ ժողովուրդը այն երբեք ցամաքելի գետն է, որ տակավին պիտի ապրեցնե իր արյունով թրջված կանաչներու վրա ամբողջական եւ երբեք հաղթելի իդեալներ:

***

… Հայ ժողովրդի անցյալ պատմությունը անպայման բացատրիչ աղբյուրն է անոր արդիական արժեքին եւ էության:


***

… Հայ ժողովրդի ամբողջական իդեալը՝ մնալու ազգ իր բոլոր առանձնահատկություններով, եղած է ամենեն լուսավոր գիծը, որ երկարած է իր զավակներուն հոգիներուն մեջ մեկ ծայրեն մյուսը, երկրին մեջ, թե ի տարագրություն, երբեմն բեկբեկված առժամանակյա կերպով խավարին եւ սուրին դեմ, բայց երբե՛ք ջնջված անդառնալիորեն:



«Որքան ժամանակը սահի՝ ավելի խոր կերպով կը սիրեմ Վահան Թոթովենցի կյանքը, ճշմարտությունը, առասպելն ու ողբերգությունը»:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ



ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԶՐՈՒՅԱԿԻՑՆԵՐ

Շարքը պատմում է հանրահայտ ստեղծագործությունների մասին, և հույս ունենք, որ օգնում է ձեզ, սիրելի՛ դպրոցականներ, ընթերցելու գրքեր ընտրելու հարցում: Նախորդ համարներում ներկայացրել ենք **Ջ. ՍԿԻՖԹԻ «ԳՈՒԼԻՎԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», Ֆ. ՌԱԲԼԵԻ «ԳԱՐԳԱՆՏՅՈՒԱ ԵՎ ՊԱՆՏԱԳՐՅՈՒԵԼ», Մ. ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԴՈՆ ԿԻԽՈՏ», ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԸ»** հեքիաթը, **ՖԻՐԴՈՒՍՈՒ «ՇԱՀՆԱՄԵ» երկը, ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻԻ «451*՝ ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ»** և այլ ստեղծագործություններ:

Այժմ՝ **ՍԵԼԻՆՋԵՐ՝ «ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ»:**

Մարդկանց պահվածքը շփոթեցնում ու հիասթափեցնում է տասնյոթամյա տղային: Նա կարող է հայտնվել անդունդի հատակին, կարող է և անասելի ջանքերով դուրս գալ այդ վիճակից: Ամերիկացի գրող Ջերոմ Դեյվիդ Սելինջերի **«ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ»** վեպը տասնամյակներ շարունակ մնում է ընթերցողների հետաքրքրության առարկան:

Ավելի շատ *կեղծավորությունն է* հիասթափեցնում ու նույնիսկ զզվեցնում Հոլդըն Քոլֆիլդին Փենսիի դպրոցում. կեղծավոր են ուսուցիչները, կեղծավոր են և աշակերտները: Համբավավոր շրջանավարտներից մեկը, որ թաղման բյուրոներ էր բացել ամբողջ երկրում ու ահագին փող աշխատել, ամեն տարի հանդիպում էր սովորողների հետ և ասում, որ անընդհատ խոսում է Հիսուսի հետ. **«Պատկերացրե՛ք, թե այդ կեղծավոր տականքն ինչպես է փոխում մեքենայի արագությունը առաջինի ու միաժամանակ նրանից խնդրում, որ իրեն ևս մի քանի դիակ ուղարկի»:** Ահա հենց այդ դպրոցում է սովորում տասնյոթամյա հերոսը, որտեղից մի օր հեռացնում են: Բացի անգլերենից՝ ձախողել էր բոլոր առարկաները: Ընդ որում՝ դա

առաջին հեռացումը չէր:

Դպրոցից դուրս էլ կյանքը ոչնչով չի կարող ուրախացնել նրան: Նույն կեղծավորությունն է գիշերային ակումբում: Ինչ-որ մեկը, անվերջ խոսելով, շոյում է ընկերուհուն, որը դիմադրության թույլ փորձեր է անում. *«Պատկերացնու՞մ եք՝ մեկին շոյում եք, ու միևնույն ժամանակ պատմում ինքնասպանություն գործած տղայի մասին: Քիչ էր մնում՝ մեռնեի»:*


Նյու Յորքի գիշերային կյանքի զվարճությունները խորթ չեն Հոլդընին, բայց շուտով դրանք էլ են հիասթափեցնում: Որոշում է զանգահարել ընկերուհիներից մեկին՝ Սելլիին, և նրա հետ ներկայացում դիտել: Աղջիկը նրան թյուրիմացության մեջ էր գցել: Շատ բան գիտեր թատրոնի, պիեսների ու գրականության մասին: Բայց Հոլդընը շուտով պարզում է, որ նա խելացի չէ. *«Շատ ավելի վաղ կպարզեի, եթե մենք այդքան շատ չհամբուրվեինք: Վատն այն է, որ միշտ կարծում եմ՝ բոլոր նրանք, ում հետ համբուրվում եմ, շատ խելացի են: Մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունի...»:*

Թատրոնում էլ կեղծավորների պակաս չկար: Ընդմիջմանը հանդիսատեսները միմյանց հերթ չէին տալիս. *«Բոլորը ծխում էին ու խոսում ներկայացման մասին այնպես, որ մյուսները լսեին և իմանային՝ որքան խելացի են իրենք»:* Սելլիի ուշք ու միտքն էլ ավելի շատ իր արտաքին բարեմասնությունները ցուցադրելն էր: Առաջարկում է սահադաշտ գնալ, որտեղ չմուշկների հետ մեկտեղ շատ կարճ կիսաշրջազգեստ էին տալիս:

Հոլդընը Սելլիին խոստովանում է, որ դպրոցն իրեն ոչինչ չի տալիս, ինքն ատում է նաև կյանքը Նյու Յորքում, որտեղ իշխում է փողի պաշտամունքը: Աղջկան առաջարկում է թողնել ամեն ինչ ու իր հետ գնալ հեռու-հեռու, ապրել սեփական վաստակով: Այս առաջարկությանը, բնականաբար, հետևում է մերժումը. *«Ինչպե՞ս կարելի է նման բան անել»:*

Հոլդընը կարծես հենման ոչ մի կետ չունի: Նույնիսկ իրենց ինտելեկտուալ համարող տղաների մեջ է եսասիրություն ու նախանձ նկատում: Չեն ուզում ինտելեկտուալ զրույց վարել: Երբ խոսում են, բոլորը պիտի լսեն, երբ լռում են, բոլորը պիտի լռեն: Իսկ այդպիսի տղաներից մեկն ավելի հեռուն էր գնացել. *«Պահանջում էր, որ բոլորը ցրվեն իրենց սենյակներն ու քնեն, քանի որ ինքն արդեն խոսելիք չուներ: Իրականում վախենում էր, որ ինչ-որ մեկն իրենից խելացի բան կասի: Ուղղակի ծիծաղելի էր»:*

Հոգնեցրել են ինտելեկտուալները: Հոգնեցրել են նաև կանայք, ովքեր կարող են կինոթատրոնում ժամերով ֆիլմ դիտել և չլսել երեխային, որ ակնհայտորեն ձանձրացել ու զուգարան է ուզում. *«Վերցնենք տասը մարդու, որոնք*



հոնգուր-հոնգուր լալիս են ֆիլմեր դիտելիս, նրանցից ինը հաստատ սրիկա դուրս կգա: Ազնիվ խոսք»:


Փաստաբան հոր մասնագիտությունն էլ չի գրավում. *«Այսինքն՝ վատ չէ, եթե միշտ փրկել են անմեղ մարդկանց կյանքը և այլն, բայց փաստաբանները երբեք դրանով չեն զբաղվում: Նրանք միայն կարգին փող են աշխատում, գոլֆ են խաղում, բրիջ են խաղում, մեքենաներ են գնում, մարտինի են խմում ու թիթիզանում են»:*

Ժխտման կիրքը հզոր է և կարող է իր ճանապարհին ավերածություններ գործել ու անդառնալի կորուստների պատճառ դառնալ: Բայց Հոլդընին չի լքում նաև մարդկանց փրկելու գաղափարը: Քրոջ՝ Ֆիբիի հետ հիշում է Ռոբերտ Բըրնսի բանաստեղծությունը՝ «Եթե մեկը տեսնի մյուսին տարեկանի արտում...»: Պատկերացնում է տարեկանի արտ, որտեղ վազվզում են հազարավոր երեխաներ: Իսկ ինքը կանգնած է ժայռի եզրին և ստիպված է բռնել նրանց, որ չընկնեն. «Իմ գործը միայն դա է: Ես փրկիչ եմ տարեկանի արտում: Գիտեմ՝ խենթություն է, բայց միակ բանն է, որ կուզեի անել»:

Միայն թե ուրիշներին փրկելուց առաջ Հոլդընը պետք է հոգ տանի իր մասին, կարգի բերի մտքերը: Ի՞նչ է անելու: Նախ որոշում է հեռանալ տնից: Այդ մասին հայտնում է միայն սիրելի քրոջը՝ տասնամյա Ֆիբիին: Քույրը մտադիր է հետևել եղբորը: Գուցե նրա վճռականությունն էր պատճառը, որ Հոլդընը հետ է կանգնում տնից անվերադարձ հեռանալու մըտքից: Նա պետք է հանգստանա և կրկին սովորի: Ճիշտ է, արդեն ուրիշ դպրոցում: Ի վերջո, անհուսալիորեն կորածի մեկը չէ: Քրոջ հանդեպ սերը, Շեքսպիրը, Թոմաս Հարդին թերևս դառնան այն հենարանները, որոնք կօգնեն ամուր կառչելու կյանքից, հաղթահարելու անհատակ անդունդի ձգողականությունը:

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ



ՆԱՐԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
9 տ.



ԱԼԻՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
9 տ.



ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ
16 տ.



ԱՐՄԵՆ ՄԱԿՈՒԿՅԱՆ
10 տ.



ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
7 տ.

Արագածոտնի մարզի Իրինդ գյուղի նկարչական խմբակի սաները

Ղեկավար՝ ՄԿՐՏԻՉ ՀՈՎՍԵՓՅԱՆ



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀՍՅԱՆ
12 տ.



ՄԱԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ
10 տ.




ՄՀԵՐ ՔՈԹԱՆՅԱՆ
10 տ.



ՌՈԶԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
16 տ.



ՌԱԴԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
8 տ.



ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7 տ.



ՇԱՀԱՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ
11 տ.

ԼԱՎՆ ԵՍ, ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր հայրենի՝ դու իմ Հայաստան
Չգիտեմ՝ ինչպես ես քեզ գովերգեմ,
Ինչից սկսեմ, ինչով ավարտեմ,
Ինչպես չսիրեմ քեզ, իմ Հայաստան:
Դու իմ հոգին ես, իմ ես-ն ես հպարտ,
Որ ծնունդ առավ հասարակ մորից,
Բայց իր խենթությամբ, վարմունքով անպարտ
Հայի զորությունն իր ձեռքը առավ:
Իմ երկիր ազատ, դու՛, ի՛մ Հայաստան,
Որքան գունեղ ես ու որքան պայծառ,
Ինչպե՞ս չսիրեմ քեզ, ի՛մ Հայաստան,
Ինչպես չպաշտեմ երգերդ կայտառ:
Ախ, դու Հայաստան, ի՛մ քնքուշ երազ,
Որ հողիդ խորքից ծիլեր ես հանել,
Ինչպե՞ս կարող ես չլինել սիրված,
Չէ՞ որ մի ազգի սրտեր ես կապել:
Հայաստան աշխարհ, ախր, հրաշք ես՝
Հսկա սարերով, վարդերով լեցուն...
Ինչպե՞ս չգրեմ, որ լավն ես այսքան,
Բացվել ես կարծես, ինչպես նոր գարուն:
Չքնաղ, գեղանի ու երանելի,
Անզուսպ հուզմունքով լցված դու աշխարհ,
Լուսերես հոգով ու երջանկությամբ
Հայերի օջախ, ի՛մ Հայոց աշխարհ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Սիրում եմ ես քո ջրերը վարար,
Սիրում եմ նաև ամեն քար ու սար,
Սիրում եմ գիր ու մագաղաթը քո
Եվ սիրում եմ ես անուշ երգը քո:

Ամեն ծաղիկդ ունի քո բույրը,
Եվ բարությունն է գալիս քո դուռը,
Իմ Հայաստանն ես,
Ու իմ բերկրանքն ես,
Ու երգերիս ամեն մի մասն ես:

ԱՆԹԱՌԱՄ ՎԱՐԴԵՐ

Անթառա՛մ երկրի
Անթառա՛մ վարդեր,
Մեր ուժեղ ազգի,
Դարավո՛ր վարդեր:
Մեր հզոր բազկի,
Մեր ճկուն ցատկի
Ու գիտուն մտքի,
Անթառա՛մ վարդեր:
Ապրել եք օրեր
Ու շատ տարիներ,
Ապրել եք դարեր
Ու հասունացել:
Հասունացել եք ու հզոր դարձել
Ե՛վ շիկնել եք դուք,
Ե՛վ տխրել եք դուք,
Ե՛վ անգամ նույնիսկ
Ժպտացել եք դուք:
Դուք երբ շիկնում եք,
Գեղեցի՛կ վարդեր,
Աշխարհին է շիկնում ու
շառագունում,
Դուք երբ տխրում եք,
Աննմա՛ն վարդեր,
Տխրում են բազում մարդիկ ու
աստղեր:
Իսկ երբ ժպտում եք,
Հիասքա՛նչ վարդեր,
Արևև է ժպտում ու թափում
փայլեր:
Ապրե՛ք դարերով ու
հասունացե՛ք,
Աճե՛ք, զարգացե՛ք ու
բարգավաճե՛ք,
Տխրե՛ք, ժպտացե՛ք ու նաև
շիկնե՛ք,
Անթառամ երկրի անթառա՛մ
վարդեր...

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Ծաղկի՛ր անվերջ,
Հայոց աշխարհ,
Դու արժան ես ծաղկունքի,
Քո սարերով, քո երգերով
Քո բարիքով ահռելի:
Ծիրանիդ պես քաղցր ու
համեղ,
Անզուգական ջրերով
Ու քո անուշ հողի շնչով
Պիտի թնդաս աշխարհով:
Ու քո որդու ոսկի ձեռքով
Հողդ փուխր պիտ պահես,
Որ դստրիկդ երբ որ քայլի,
Հողի նազանքն ելնի վեր:
Քո աշխարհով, խաղով, պարով
Նոր մանկություն պիտ մտնես
Եվ դուստրը քո, ում աճեցրիր,
Քեզ մայր պիտի դառնա վես:
Օջախումդ, շենումդ, քո
ոստանում
Երգի՛ր ուրախ ու պարով,
Որ մարդ, թե բույս, թե կենդանի
Ապրի քնքուշ երազով:

ԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ԵՊԲՀ Հերացի ավագ
դպրոցի 11/3 դաս.



ՌՈՏՈՆԴԱ

թատերախումբ

Պատանեկան-երիտասարդական ներառական թատերախումբ է, որը գործում ավելի քան 15 տարի: Թատերախումբը խոսքի, հնչյունի, ժեստերի և գույների միջոցով արտահայտում է խմբի յուրաքանչյուր անդամի հույզերը, ապրումները, ցանկություններն ու զգացումները: Եվ այս ամենին հաղորդակից ու ակտիվ մասնակից է դարձնում նաև իր լսարանին, որը ոչ ֆորմալ թատերական ներկայացումների ժամանակ ներգրավվում է գործողությունների մեջ:



«Ռոտոնդա» թատերախումբ հաճախում եմ 2013 թվականից մինչ օրս: Խաղացել եմ բազմաթիվ ներկայացումներում, կերտել եմ բազմաթիվ կերպարներ: Այդ ներկայացումներից են՝ *«Ես և դու»*, *«Պինոկիոյի արկածները»*, *«Սուրբ Սարգսի վարքը»*, *«Իմ սրտի տունը»*, *«Ծնվելուց առաջ»*, *«Սուտիկ որսկանները»*, *«Սուտասանը»*, *«Շունն ու կատուն»*, *«Հսկող աչք»*, *«Բարեկենդանը»*, *«Ծանոթ անծանոթները»*, *«Ծաղիկների երգը»*, *«Ամեն մեկին իր վարձքը»*, *«Էսպես չի մնա»*, *«Ակամա դերասանը»*, *«Սուրբ Ծննդյան հրաշքը»*, *«Բարեկենդանից առաջ ու հետո»* և այլն: 2014 թվականին մասնակցեցի **TEDxKids@ Yerevan** ծրագրին՝ ճանաչվելով «Առաջին խոսնակ»: Հետագայում որոշեցի դառնալ դերասան և ընդունվեցի թատերական քոլեջ, բայց դրան զուգահեռ շարունակեցի խաղալ «Ռոտոնդա» թատերախմբում:

Թատերախմբի սան
ՌԱԶՄԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ



Թատերախմբի սան
ԼԻԼԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



Ես Լիլի Սուքիասյանն եմ՝ «Ռոտոնդա» թատերախմբի **ժպիտը**: Երբեք չէի պատկերացնի, որ մի օր հանդիսատեսից կդառնամ *«դերասան»*: Հա, եթե բախտ է վիճակվում մեկ անգամ դիտել «Ռոտոնդա» թատերախմբի ներկայացումներից որևէ մեկը, ապա ակամայից տանջվում ես այն մտքից, թե ի՞նչ անեմ, որ ես էլ հայտնվեմ այդ բեմում: «Ռոտոնդա»-ն թատերախումբ չէ, այլ **Թումանյանի օրհնված «օջախը»**: Ուրախ եմ, որ ես այս ընտանիքի զավակն եմ:

Թատերախումբն ունի կրթական առաքելություն: Այդ նպատակով հատուկ ներկայացումներով հանդես է եկել տարբեր կենտրոններում՝ թանգարաններ, դպրոցներ, հատուկ ուշադրության կարիք ունեցող մարդկանց խնամքի կենտրոններ, արյունաբանական կենտրոններ, մանկատներ:

Թատերախմբի սան
ԻՆԳԱ ԱՂՈՅԱՆ



Ես Ինգան եմ, վաղուց էի լսել «Ռոտոնդա» թատերախմբի մասին իմ ընկերներից: Երբ առաջին անգամ Սոֆիկ տատիկի հետ եկանք թատերախումբ, անմիջապես զգացի մեծ ջերմություն թե՛ երեխաներից, թե ընկեր Մարինեից՝ այնքան հարազատ, որ *«ընկեր Մարինեն»* դարձավ **«Մար ջան»**: Ես ունեմ նոր ընկերներ ու երջանիկ եմ, որ այս հրաշալի թատերախմբի մասն եմ կազմում:

Թատերախմբի սան
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ



Ես Արամն եմ: Մեծ ուրախությամբ խաղում եմ ինձ հանձնարարված դերերը, որը մեզ սովորեցնում է մեր հիանալի և գեղեցկուհի ընկեր Մարինեն, որը մեզ համար ոչ միայն թատերախմբի ղեկավար է, այլև հավատարիմ ընկեր: Ես Արամն եմ: Ընկեր Մարինեն տվել է մեզ ամեն ինչ. *սեր, կյանք*: Նա մեզ փոխել է, դարձրել ավելի բարի, օգնել ու աջակցել: Մեր շատ սիրելի և **միակ** ընկեր Մարինե ջան, ես զգալով, հասկանալով եմ հղում այս խոսքերը, հավատացած եղեք:

Թատերախումբը մասնակցել է տեղական և միջազգային փառատոների: Թատերախմբի ղեկավար Մարինե Ասատրյանը բեմադրիչ է, սցենարիստ և ռեժիսոր, որն ունի 30-ից ավելի տարիների կենսափորձ և հմտություն ապահովելու ներառական և առողջ միջավայր:

Կրթությունը որպես թատերախմբի ձևավորման և գործելու կարևոր առաքելություն, ճանապարհ է յուրաքանչյուր անդամի համար դեպի թատերական մեծ աշխարհ:

Թատերախմբի սան
ԳԱԳԻԿ ԳԱԼՈՒՍՏՈՎ



Մի փոքր պատմեմ մեր մասին. «Ռոտոնդան» **միակ թանգարանային** թատերախումբն է, որն իր գործունեությունը ծավալում էր Հովհաննես Թումանյանի թանգարանի ջերմ տանիքի տակ: Քանի որ թանգարանն այժմ հիմնանորոգման մեջ է, մենք հյուրընկալվել ու ջերմ ընդունելություն ենք ստանում «Նարեկացի» արվեստի միությունում: Պարոն Նարեկը և մյուս աշխատակիցները մեզ շատ են սիրում: Ես արդեն հասցրել եմ «Ռոտոնդայում» խաղալ մի շարք ներկայացումներում և երկու ֆիլմում՝ նկարահանված Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա: Օրերս էլ ներկայացրեցինք Բարեկենդանի տոնին նվիրված բեմադրությունը: Իմ խոսքը կհաստատի յուրաքանչյուր Ռոտոնդացի, որ մենք դարձել ենք մի մեծ ընտանիք՝ մեր մեծ ռեժիսոր - ընկեր Մարինեի շնորհիվ:

Թատերախմբի սան
ՆՈՐՎԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ



Ես Նորվարդ Մկրտչյանն եմ: Ինձ համար թատերախմբում հայտնվելը հեշտ չէր. մտածում էի, թե ես բեմի վրա ոնց կարող եմ ինձ ներկայացնել և դերս կատարել: Բայց այսօր արդեն կարող եմ ասել իմ շնորհակալությունը, որ ինձ սովորեցրեցիք ճանաչել թատրոնը ու երազել, որ ես էլ կարող եմ մի օր դառնալ դերասանուհի:

Շնորհակալություն, ցտեսություն:

Ծնողի կարծիքը թատերախմբի մասին

Ես Աղավնի Սանդուրյանի մայրն եմ: Մենք արդեն 18 տարի է Մարինե Ասատրյանի սանն ենք: Մեր կյանքի գրեթե բոլոր երջանիկ իրադարձությունները կապված են թատրոնի հետ, որտեղ մենք կիսում ենք յուրաքանչյուրիս ուրախ և դժվար պահերը: Մեր դժվարությունները հաղթահարում ենք «Ռոտոնդայի» հետ, որտեղ շա՛տ սեր կա ու սեր սփռող ընկեր Մարինե:

Թատերախմբի սան
ՄԻՇԵԼ ՉԱՔԱՐՅԱՆ



Ես Միշել Չաքարյանն եմ՝ ռոտոնդացիների *փոքրիկ քույրիկը*: Ռոտոնդացի եմ դեռևս այն ժամանակից, **քանի դեռ փոքրիկ իշխանի նման իմ մոլորակում էի**: Ռոտոնդացի չեմ դարձել, այլ ժառանգել եմ հայրիկիցս, քանի որ ինձնից առաջ հայրս էր ռոտոնդացի: Արդեն 3 տարի է, ինչ վայելում եմ Ռոտոնդա ընտանիքի ջերմությունը՝ շնորհիվ ընտանիքի մայր՝ ընկեր Մարինեի: Շատ բան եմ սովորել քույրերիցս և եղբայրներիցս և դեռ ունեմ սովորելու: Այստեղ հասկացել եմ, որ բոլորս հավասար ենք, միաժամանակ շատ յուրահատուկ և միակն աշխարհում:

Ծնողի կարծիքը թատերախմբի մասին

Ես Մեգիի և Կարենի մայրիկն եմ: Իմ երեխաները, ճիշտ է, մի քանի ամիս է, ինչ հաճախում են «Ռոտոնդա» թատերախումբ, բայց հասցրել ենք ստանալ գերագույն հաճույք և՛ թատերախմբի երեխաների, և՛ մեր շատ սիրելի ընկեր Մարինեի կողմից: Թատերախումբը դրականորեն է ներգործում երեխաների ինքնարտահայտվելու հնարավորությունների վրա:

Ես Ալինան եմ՝ Վահե և Վանիկ Գրիգորյանների մայրը: Տղաներս թատերախումբ են եկել 5 և 10 տարեկանից: Թատերախումբը մեզ շատ բան է տվել, աշխարհ, որտեղ ամեն ինչին ուրիշ աչքերով կարող ես նայել: Այնքան մեծ էր սերը դեպի թատրոն, որ տղաս՝ Վահեն, շարունակում է ճանապարհին այդ մասնագիտությամբ բուհում, իսկ Վանիկը շարունակում է հաճախել «Ռոտոնդա», որը մեր երկրորդ տունն է:





Թատերախմբի սան
ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Ես Արմինեն եմ, եկել եմ «Ռոտոնդա» շատ պատահաբար, եկա ընդամենը մեկ պատճառով՝ մի ներկայացման մեջ փոխարինելու Մոնիին: Բայց տեսնելով **ջերմություն**, **հոգատարություն**, **ընկերություն**, ընկեր Մարինեի մտածմունքներն ու ապրումները յուրաքանչյուրիս մասին և նման շատ բաներ՝ որոշեցի դառնալ «Ռոտոնդայի» մի անդամ: Սիրում եմ բոլորին:


Թատերախմբի սան
ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Ես Հայկն եմ, հաճախում եմ «Ռոտոնդա» թատերախումբ արդեն 3 տարի: «Ռոտոնդա»-ն ջերմ ու բարի խումբ է, որտեղ բոլորն օգնում և աջակցում են միմյանց: Շնորհակալ եմ իմ ընկերներին, որոնց ձեռք եմ բերել: Շնորհակալ եմ նաև ընկեր Մարինեիս, որ ինձ օգնեց իմ տեղը գտնել թատերական աշխարհում:

«Ռոտոնդա» թատերախումբը շարունակում է իր գործունեությունը՝ միշտ բաց լինելով նոր սաների համար և ապահովելով այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր մարդ կարող է գտնել իր տեղն ու զարգացնել իր արվեստը:


2024 թ. թատերախումբը իր գործունեությունը ծավալում է «Նարեկացի» արվեստի միության մշակութային հյուրընկալ հարկի ներքո՝ նոր ներկայացումներով և նոր ասելիքներով:



ԼՈՒՍԻՆԵ ՄԱՑԱԿՅԱՆ
Շիրակի մարզ, գ. Արևշատ,
Մետքասեի անվ. դպր.
11-րդ դաս.



ԱՐԻԱՆԱ ՊԻՐՈԵՎԱ
7 տ.



ՀԱՅԿ ԱՓՈՅԱՆ,
Երևան, հ. 106 հիմն.
դպր. 6-րդ դաս.



ԱԼԵՔՍ ՌՈՒՄՅԱՆ-
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
6 տ.



ԷԼՎԻ ՍԱՐԿԻՍՅԱՆ, Երևան,
Գ. Մահարու անվան հ. 176 հիմն. դպր.
2-րդ դաս.

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԵՐ
Ծանծ

Մեր ունայնամտութիւնը յաճախ կը թելադրէ մեզի, թէ ամէն բան... գիտենք: Ի մտի ունիմ մասնաւորաբար մեր մայրենիի բառամթերքը: Մինչեւ որ օր մըն ալ ահա պատահական ընթերցումի մը առթիւ աչքերուդ առջեւ կը ցցուի բառ մը, որուն ոչ միայն ծանօթ չես նշանակութեանը, այլեւ... առաջին անգամն է որ կը հանդիպիս, դուն որ գրեթէ համոզուած էիր, թէ ծանօթ ես հայերէնի, գոնէ ընթացիկ հայերէնի, բոլոր բառերուն:

Ահա այդպիսին էր ինծի համար ծանծը, որուն հանդիպեցայ հայր Յակոբոս Տաշեանի մէկ նախադասութեան մէջ. «Ընտիր ցորենի շեղջին մէջ շատ առատ է նաեւ ծանծը» («Բառախօսական դիտողութիւններ», Վիեննա, 1926, էջ 3):

Ի՞նչ կրնայ ըլլալ այս ծանծ ըսուածը,- անակնկալի եկայ իւրովի ես, որ մատներուս ծայրին պէս լաւ կը ճանչնամ Դանիէլ Վարուժանի «Հացին երգը», որուն մէջ կիրարկուած պէտք է ըլլային ցորենին առնչուող բոլոր բառերը անխտիր:

Ծանծ...

Չի՞ կրնար ըլալ, որ գրաշարական սխալի մը բերումով ան գտնուի այս էջին վրայ. դաւադրաբար կը մաղթեմ, որ այդպէս ըլլայ, եւ զայն չգտնեմ «Նայիրի»-ի 150 բառարաններէն եւ ոչ մէկուն մէջ:

Բայց ահա չար բախտէս՝ բացած առաջին բառարանէս՝ Գայայեանի «Բառարան գանձարան»-ին մէջ կը կարդամ.

«Ծանծ - ցորենի, վարսակի փոճոկ, կճեպ»:

Փոճո՛կ...

Ուրեմն տակաւին փոճոկ մըն ալ կայ հաշուին մէջ...



Եւ այս բոլորը կը նշանակեն կճեպ, կեղեւ, պատեան՝ ցորենի ու այլազան հունտերու, ի մասնաւորի հացահատիկներու:



* * *

Լեզուն ապուրէն այրողը՝ թանը փչելով կը խմէ:

Հիմա ալ հարց կու տամ յեղակարծ փափկանկատութեամբ մը.

- Ո՞ր կճեպը...

Այն, որ կը պատէ ցորենը, երբ ան հասկին մէջ կը գտնուի տակաւին, թէ՞ այն, որ կը յառաջանար, երբ մայրս, հեռաւոր մանկութեանս, քարէ խոշոր սանդի մը մէջ թակով (խոշոր մուրճ) կը ծեծէր շուկայէն բերուած ցորենի հատիկները, որով կը պատրաստէր ձմռան այնքան գնահատուած թանապուրը:

Ուշադրութիւն. այսպէս ծեծուած ցորենը կը պահէ իր ծաւալային ամբողջութիւնը, չի կոտրտիր: Եւ ճիշդ չկոտրտելու համար ալ փայտէ թակով կը ծեծեն զայն:

Ուրեմն Ակադեմիայի քառահատորը շատ յստակ կը մատնանշէ այս վերջինը՝ հասկէն դուրս գտնուող ցորենի հատիկը պատող նուրբ մաշկն է ծանծը, որ շատ կը նմանի ձուկի թեփերուն:

Այսպէս ծեծելով թեփը հանուած ցորենը կը կոչուի ծեծած կամ կորկոտ: Կորկոտով եւ մի-սով,- թանապուրէն բացի,- կը պատրաստեն շատ գնահատուած հերիսան: Թեփահան ցորենը կամ կորկոտը կը խաշեն, լաւ մը կը չորցնեն, ապա յատուկ ջաղացով կոտրտելով կամ խոշոր աղալով կը ստանան ձաւար կամ աշտիպ, որ կը ծառայէ մասնաւորաբար եղինձ կամ փիլաւ եփելու:

Արմենակ Եղիայեան
Լիբանան
armenag@gmail.com

ՍԱԹԵՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԹՈՒՂԹ ԵՎ ԳՐԻՉ

Մի անգամ թուղթը բարկացավ գրիչի վրա:

- Հոգնել եմ քեզանից:

- Ինչու՞,- զարմացավ գրիչը:

- Մի՞թե չես հասկանում, որ դու թանաքոտում, մրոտում ես իմ ճերմակությունը,- ասաց թուղթը:

- Բայց ես գրում եմ,- համոզված, որ ինքը ճիշտ է, բացատրեց գրիչը:

- Մի գրիր, ես չեմ ուզում, ինձ հարկավոր չէ:

- Ուզու՞մ ես՝ գրեմ, թե ինչպես է ստեղծվել թուղթը,- համոզեց գրիչը:

Նա մտածում էր, որ եթե թղթի հետ մի քիչ մտերմիկ խոսի, ապա նրա բարկությունը կանցնի, չէ՞ որ իրենք միշտ միասին են:

- Ես գիտեմ, դու ինձ նորություն չես պատմելու,- շարունակեց բարկանալ թուղթը:

- Դե, պատմիր, եթե գիտես: Պատմիր, ես կվերհիշեմ,- ուրախացավ գրիչը, որ վերջապես կարողացավ թղթին համոզել:

- Չեմ հիշում:

- Իսկ եթե ես գրեմ, դու միշտ կհիշես: Հասկանու՞մ ես, իմ գրածը կմնա քո մակերեսին, դու, երբ ցանկանաս, կկարդաս ու չես մոռանա:

Թուղթը հասկացավ, որ գրիչը ճիշտ է. այդպես իր պատմությունն անընդհատ կլինի իր դիմաց, համաձայնեց, որ գրիչը գրի:



ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐԻ ԷՋ

Տիբեթի կլիման այնքան չոր է, որ կարագը և հում միսն այնտեղ կարելի է պահել համարյա մեկ տարի: Սակայն տեղի կլիմայի արտասովոր հատկանիշը դա չէ. տեղացիները երբեք չեն հիվանդանում վարակիչ հիվանդություններով, քանի որ վնասակար մանրէները չեն դիմանում լեռնային արևին:

***

Սովորական բամբուկը և նրան ազգակից տեսակները ծագում են մի նախնուց, որը 1910 թվականին Չինաստանից Եվրոպա բերել է բույսերի հայտնի հավաքող Է. Վիլսոնը: Երկար ժամանակ բամբուկի շուրջ վեճերը չեն դադարել. չէ՞ որ այն դասակարգելու համար անհրաժեշտ են ծաղիկներ, իսկ բամբուկը մինչև այդ չէր ծաղկել: Բանն այն է, որ նրա ծաղիկները բացվում են 100 տարին մեկ:

Եվ, ահա, վերջապես, ամեն ինչ պարզվեց: 1979 թվականին հովանոցավոր բամբուկը ծաղկեց Դանիայում, և ծաղկած ճյուղերը անմիջապես ուղարկվեցին գիտնականներին: Նրանք պարզեցին, որ բամբուկը պատկանում է տամնոկալամուս տեսակին, որը առաջին անգամ նկարագրվել է 1868 թվականին:

Ծաղկելուց անմիջապես հետո բույսը մահանում է, իսկ սերմերը կյանք են տալիս նոր բամբուկի:



ԽԱՉԲԱՌ


ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

1. Հեքիաթ. «Ոսկու ...-ը»:
2. Թագավորի պատմուճան:
3.Իռլանդական հայտնի հեքիաթ. «...- ի քսակը»: 4. Հնդկական հեքիաթ. «Ոսկի...-ը»:
7. Չալոյի զարմանքը «Ձան իմ ...»:
8. Տուն դրա և ...:
12. Սեղանի խաղ: 13. ... Խաթուն:
17. «Շուրիկի ....ները» ֆիլմ: 19. «Ծիտիկ, ծիտիկ, մոտ արի, քեզ տամ ... ու գարի»: 20. Գրիմմ եղբայրներ. «...-ն ու Գրետելը»:
21.Վառ: 22. ... և աթոռ:
24.Սննդամթերք:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

5. Հայտնի տիկնիկ: 6. Գրիմմ եղբայրներ. «...-ի տնակը»:
9. Հայկ. հեքիաթ. «... Հուռին»:
10. Հացահատիկային բույս, որից փլավ են պատրաստում:
11. Խանութ այցելած մարդ:
14. Կնքել: 15. Քաջ Նազարի կինը:
16. Հեքիաթ. «... գլխարկը»: 18. Հանգստյան օր: 23. Ծաղիկ: 25. «Մատյան ողբերգության» կամ ...:
26. Ձկնատեսակ: 27.«Մենք ենք մեր սարերը» (կերպարներից):
28. Մետաղ:

Կազմեց՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԸ**
Շիրակի մարզ, գ. Հայրենյաց



Խաչբառի պատասխանները

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ՝ 1. Հոմոհ 3. Նսոմովոհ 7. Ձոհոմ 12. Ռովեձ 17. Ջոհիմ 20. Հոսիձ 22. Ոզոմ 23. Տաթոհ 24. Հոմոհ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ՝ 5. Ժաոտղը 6. Ղվմոհ 9. Ոզոժղը 10. Ջոմոմ 11. Ձսողե 14. Ոսող 15. Ղոտոհ 16. ՂոտվտոՄ 18. Հիմսվհ 23. Ոզոմվձ 25. Տաոձ 26. Ղոմող 27. Ոհիմե 28. Ոզոմ

ԱՂԲՅՈՒՐ

Մանկապատանեկան ամսագիր

www.aghbyur.com



ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

www.naregatsi.org